## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

# ԻՐԱՆԱՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.78*

**Ամփոփում**

Հայ Առաքելական եկեղեցին իր գոյության ողջ ընթացքում վճռական դերակատարում է ունեցել հայության կյանքի բոլոր բնագավառներում: Ճակատագրի բերումով աշխարհասփյուռ եղած հայության հիմնած բոլոր գաղթօջախներում հայոց եկեղեցին իր վրա է վերցրել իր հոգևոր հոտի պաշտպանության, հայապահպանության, օտար պետություն-հայ համայնք հարաբերությունների կարգավորման, կրթության և լուսավորության տարածման և բազմաթիվ այլ հոգսեր, որոնց շնորհիվ դարերի ընթացքում հաջողվել է պահպանել հայ ինքնությունը: Հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը հայաստանյան և սփյուռքի հայագետների կողմից վերջին հիսնամյակում բավական բարձր մակարդակի է հասել և հրապարակի վրա են բազմաթիվ հիմնարար աշխատություններ:

Իրանահայ գաղթօջախները հսկայական դեր են խաղացել հայոց հոգևոր և մշակութային կյանքում: XVII-XVIII դդ. Նոր Ջուղան դարձել էր հայոց հոգևոր-մշակութային յուրատեսակ մի մայրաքաղաք, որտեղ կենտրոնացել էին հիմնականում հոգևոր դասը ներկայացնող լուսավորյալ հայ մտավորականության հիմնական ուժերը: Սույն հոդվածում փորձենք ներկայացնել վերոհիշյալ հայտնի և քիչ հայտնի գործիչներից մի քանիսի համառոտ բնութագիրը՝ հաշվի առնելով առաջին հերթին նրանց հոգևորական լինելու և կոնկրետ իրանահայ թեմերում գործելու պարագան:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հովվական, ձեռնահաս, նկարազարդած և ծաղկած գրչագրեր, դավանափոխ, հոգեորսություն, վեզիր, ռայաթներ, հովվություն, հոգեզալստականներ, միսիոներներ:

## Ներածություն

Հոդվածն ուսումնասիրում է իրանահայ հոգևոր թեմերի այսպես կոչված «մոռացված սրբերի» կամ սուրբ նահատակների առանձնացումն ու դրանց մասին լրացուցիչ տեղեկությունների հավաքագրումը: Աշխատանքի նպատակից բխում է նրա արդիականությունը, քանզի մինչ այժմ թեման համապարփակ ուսումնասիրված և ներկայացված չէ: Ցանկացած հայկական գաղթավայրի տարածքն ընդգրկող հոգևոր թեմի

ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ և քննել արդի բազմաթիվ խնդիրներ, որոնք ծագում են հայկական Սփյուռքում: Ինչպես էլ անվանենք Մայր հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքները՝ գաղթավայր, թե Սփյուռք, միևնույն է դրանց հուզող հիմնախնդիրները անցյալում, թե ներկայում հար և նման են, իսկ հայապահպանման խնդիրը եղել է ու կա այդ համայնքների գոյատևման հիմնական հարցը:

Այս հոդվածը առաջին փորձերից մեկն է ներկայացնելու մեկ առանձին վերցրած գաղթավայրի հոգևոր թեմերի ուսումնասիրությունը, որտեղ օբյեկտը իրանահայ հոգևոր թեմերի ներակայացուցիչներն են, իսկ առարկան՝ իրանահայության հոգևոր-կրոնական կյանքը:

**Մեթոդաբանությունը**

Հետազոտությունն իրականացվել է օգտագործելով լայն համեմատության և պատմահամեմատական մեթոդների համադրությունը: Պատմական ժամանակաշրջանը, տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, հոգևոր-կրոնական եղելությունները, իրադարձությունների վայրը, գործող պատմական դեմքերը ուսումնասիրվել են սինխրոն կտրվածքով՝ հիմնականում պահպանելով դրանց ժամանակագրական ատաղձը՝ չխախտելով պատմականությունը: Զբաղմունքի կենտրոնը գրագիտական հետազոտություններին բնորոշ մի շարք մեղոթաբանական դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռել իրանահայ գաղթօջախներին առնչվող շուրջ 120 հիշատակարաններից դուրս բերել հոդվածի թեմային առնչվողները: Այս տեսանկյունից առաջնայինն է հանդիսանում աղբյուրի հայտնաբերումը, մեր դեպքում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և կաթողիկոսական դիվաններում պահվող փաստաթղթերում իրանահայ հոգևոր թեմերին առնչվող նյութերի դուրսբերումը, տեքստի հստակեցումը, սկզբնաղբյուրի ծագման վայրը, հեղինակը, ժամանակը, տեքստի կազմման հանգամանքները, պատմական հանգամանքները: Տեքստերի հետազոտական անալիզը հատկապես լայնորեն տարածված է աստվածաբանական բնույթի հետազոտություններում և, բնականաբար, ելնելով ներկայացվող թեմայի կրոնագիտական ուղղվածությունից, օգտագործվել է որպես ուսումնասիրության մեթոդաբանական կարևոր հիմքերից մեկը:

Կիրառվել են նաև սկզբնաղբյուրների անալիզի և սինթեզի մեթոդները, երբ համեմատվել են միևնույն բնույթի և բովանդակային առումով միմյանց նման կամ լրացնող տեղեկությունները՝ աղբյուրների ժանրային տարբերություններով հանդերձ:

## Քննարկում

### Խաչատուր Վարդապետ Կեսարացի

Խաչատուր Կեսարացին (1509-1646) հայոց հոգևոր-մշակութային երևելի գործիչներից է, որը Նոր Ջուղայում իր հովվական գործունեության ընթացքում կարողացավ գլուխ բերել երկու խոշոր մշակութային-լուսավորական ձեռնարկ: Առաջինը՝ Իրանում և, ընդհանրապես, Միջին Արևելքում 1636թ. հիմնված տպարանն էր և երկրորդը՝ Նոր Ջուղայի հռչակավոր դպրոցը:

Խաչատուր Կեսարացին աշակերտել է Գրիգոր Դարանաղցուն և Մովսես Սյունեցուն՝ ստանալով հիմնավոր աստվածաբանական կրթություն:

1620թ. Խաչատուր Կեսարացին որպես կաթողիկոսական նվիրակ ժամանում է Նոր Ջուղա: Նորջուղայեցիները, տեսնելով երիտասարդ ձեռնահաս և լուսավորյալ վարդապետի նվիրումը, խնդրագիր են հղում Հայոց Հայրապետին Խաչատուր վարդապետին իրենց առաջնորդ նշանակելու համար: Այդ տարիներին պաշտոնավարող Մեսրոպ եպիսկոպոսը ծերացել էր և չէր կարող պատշաճ հովվել այս նորաստեղծ հայկական գաղթօջախում: Ընդառաջելով նորջուղայեցիների խնդրանքին՝ Հայոց կաթողիկոսը Խաչատուր վարդապետին նշանակում է Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդ և Սբ. Ամենափրկիչ վանքի վանահայր:

1630թ. Մովսես Գ Տաթևացի (1629-1632) կաթողիկոսի հրամանով Խաչատուր Կեսարացին Սիմեոն Ջուղայեցու հետ որպես կաթողիկոսական նվիրակ մեկնում է Լեհաստան, որտեղ վեճ էր ծագել տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչի և համայնքի միջև: Լեհաստանում շրջագայելիս Կեսարացին ծանոթանում է տպագրական գործին և Նոր Ջուղա վերադառնալուց հետո ձեռնամուխ է լինում տպարանի ստեղծման դժվարին գործին:

1636թ. իր շուրջը հավաքելով Ս.Ամենափրկիչ վանքի միաբաններին՝ Կեսարացին տնայնագործական եղանակով ստանում է թուղթ, տպագրական ներկ, մամուլ և ձուլում տառերը: Խաչատուր վարդապետի և միաբան հայրերի մեկ տարի և հինգ ամիս տևած տքնաջան աշխատանքի արդյունքում 1638թ. լույս տեսավ Նոր Ջուղայում տպագրված առաջին գիրքը՝ «Սաղմոս ի Դաւիթ», որի հիշատակարանում գրված է. «Եւ յաւուրս սորա[1] եղեւ տպագրութիւնս ի քաղաքն Շօշ, յանապատն Ջուղայոյ, ի թուին ՌՁ և է (1638): Ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետ Կեսարացւոյ, որ

[1] Նկատի ունի Փիլիպոս Ա Աղբակեցի (1633-1655) կաթողիկոսին

տարի մի է և հինգ ամիս, որ զցայգ և ցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիւս, զի ոչ եմք տեսլ ի վարդապետէ և ոչ ունիմք ուսուցիչ» (1):

Խաչատուր Կեսարացուն հաջողվեց տպագրել չորս անուն գիրք, բացի վերոհիշյալ «Սաղմոս ի Դաւիթ»-ից, 1641թ. «Հարանց վարք» և «Խորհրդատետր», 1642թ. «Ժամգիրք Ատենի»:

Կեսարացին կարողացավ Նոր Ջուղայում հիմնել դպրոց, որի հռչակը տարածվեց ողջ հայության շրջանում, և այն նույնիսկ որոշ դեպքերում համալսարան էր հորջորջվում: Այստեղ իրենց հիմնավոր աստվածաբանական կրթությունն են ստացել բազմաթիվ ականավոր հոգևորականներ, որոնցից Հակոբ Ջուղայեցին 1655թ. ընտրվեց Հայոց կաթողիկոս: Կեսարացու հիմնած դպրոցի նշանավոր սաներից էին Ոսկան Երևանցին, Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցին, Դավիթ եպիսկոպոսը և այլք: Խաչատուր Կեսարացին նաև հմուտ մանրանկարիչ էր: Նրա նկարազարդած և ծաղկած գրչագրերից մեզ են հասել երեքը (1):

**Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցի**

Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի միաբան, «Տիեզերալույս փիլիսոփա» Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցին (1643-1715) Հայ առաքելական եկեղեցու անկախությունն ու ինքնուրույն գոյության իրավունքը պաշտպանող ականավոր և մեծահռչակ գործիչներից էր: Հովհաննես Մրքուզը ականավոր աստվածաբան, փիլիսոփա, տրամաբան, քերական և գեղանկարիչ էր, որը թողել է հարուստ գիտական ժառանգություն: Հովհաննես վարդապետի անձը և նրա թողած մատենագրական ժառանգությունը սկսած իր ապրած ժամանակներից մինչ այսօր աստվածաբանության, փիլիսոփայության, բանասիրության և արվեստաբանությամբ զբաղվող հետազոտողների ուսումնասիրության առարկա են[2]: Մրքուզ Ջուղայեցին այն եզակի հայ մատենագիրներից է, որի աշխատությունները տպագրվել են իր կենդանության օրոք: Նրա ձեռագիր և տպագիր աշխատություններից շատերը պահվել են հավատացյալ հայորդիների տանը՝ որպես սուրբ գիրք: Հովհաննես վարդապետի աշխատություններից հիշատակության են արժանի «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց», «Քերականութիւն», «Գիրք որ կոչի

[2] Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցու գիտական ժառանգության հետազոտության բնագավառում անգնահատելի ավանդ ունի հայ փիլիսոփայության պատմության լավագույն ուսումնասիրողներից մեկը՝ պրոֆեսոր Հր.Միրզոյանը, ով մի քանի հիմնարար հոդվածներ և մենագրություններ է հրապարակել այդ թեմայով, որոնց համահավաքն է կազմում «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի,, ԵՊՀ հրատ., Երևան, 2001» չափազանց արժեքավոր մենագրությունը:

Սրբազնագործութիւն», «Ասուածաբանութիւն», «Դաւանութիւն հաւատոյ», «Կրթութիւն հաւատոյ», «Մեկնութիւն Սաղմոսի», «Մեկնութիւն Երգոյ երգոյն», «Տրամկցութիւն ճշմարտութեան», «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ», «Գիրք պատմութեան», «Ըղձալի Քրիստոսի օրենքը» և այլն:

Հովհաննես Մրքուզը փայլուն տիրապետում էր պարսկերենին ու արաբերենին, և իր մի քանի աշխատություններ գրված են եղել հայ և պարսիկ լեզուներով դեմ առ դեմ: Պարսկերենի նրա իմացությունն այնքան խորն էր ու հիմնավոր, որ պարսիկ շատ հոգևորականներ գալիս էին նրա մոտ իրենց իսկ մայրենի լեզվում հմտանալու (2):

Պարսից Սուլեյման շահը և նրա հաջորդ շահ Սուլթան Հուսեյնը, ցանկանալով դավանափոխ անել իրանահայությանը, իրենց հետ վերցնելով բանիմաց շիա հոգևորականների և իմաստունների, հրապարակային բանավեճի մեջ են մտել Հովհաննես վարդապետի հետ: Ինչպես վկայում է Խաչատուր աբեղա Ջուղայեցի պատմիչը, այս բանավեճերի ընթացքում Հովհաննես վարդապետն անհողդողդ է եղել և հիմնականում կարողացել է հաղթանակած դուրս գալ: Շահ Հոսեյնը նույնիսկ Հովհան անվամբ (Մահմադ Ալի բեկ) ուրացող հայ աբեղայի էր բերել Հովհաննես Մրքուզի հետ բանավեճի, սակայն «Տիեզերալույս փիլիսոփան» կարողացել է ճիշտ պատասխան գտնել կրոնափոխ շեխմումինի պրովոկացիոն հարցին, թե ինչու հայ քրիստոնյաները չեն ճանաչում իրենց կրոնի հիմնադրին մյուս մարգարեների շարքում (3):

**Խաչատուր աբեղա Իսահակյան Ջուղայեցի**

Խաչատուր աբեղա Իսահակյան Ջուղայեցին իրանահայ հոգևոր-մշակութային աչքի ընկնող գործիչներից մեկն է, որի հեղինակած «Պատմություն պարսից» մատյանը աղբյուրագիտական բացառիկ արժեք ունի թե՛ Իրանի, թե՛ XVII-XVIIIդդ. իրանահայության պատմության ուսումնասիրության համատեքստում: Հեղինակի անձի և նրա կյանքի մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Խաչատուր աբեղան ինչպես ինքն է ասում. «…որ եմ ծնեալ ի Նոր-Ջուղա և սնեալ և զարգացեալ ի Հրաշակերտ վանս սրբոյ Փրկչի ի սոյն Նորոյ-Ջուղայի» (3): Պատմիչի ծննդյան և մահվան թվերն անհայտ են, միայն գիտենք, որ եղել է Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի միաբաններից, ապրել է XVIII դարում և իր մահկանացուն կնքել Բասրայում, ուր Սբ. Ամենափրկիչ վանքի միաբանության կողմից գնացել էր որպես նվիրակ և այնտեղից էլ պետք է նույն առաքելությամբ մեկներ Հնդկաստան (4):

Խաչատուր Ջուղայեցին իր իսկ վկայությամբ հիմնավոր կրթություն չէր ստացել և չէր մարզվել հզոր սոփեստների մոտ փիլիսոփայության ու քերթողության բնագավառներում (3): Խաչատուր պատմիչը իր

աշխատությունը գրել է իր բարեկամ Հարություն Իսահակյանի պատվերով: Նոր Ջուղայի պատմության քաջագիտակ Հարություն Տեր-Հովհանյանցը գրում է, որ. «Հայր Միքայէլ վարդապետն Չամչեան յամի 1787 ի 15 յունվարի գրէ թուղթ առ գիտնական պարոն Յարութիւն Սահակեան Աղանուրեանց, խնդրելով ի նմանէ առաքել առ ինքն զանուանս թագաւորացն Պարսից հանդերձ ժամանակագրական ծանոթութեամբ նոցին գահակալութեան» (5): Խաչատուր աբեղան, ստանալով պատվերը, իրապես մի ժամանակագրություն է գրում, որտեղ հիշատակում է պարսից տիրակալների Կյուրոս Ավագից սկսած (Ք.ա. 559թ.) մինչև Քերիմ խան Զենդի մահը 1779թ.՝ տալով դրանց կառավարման թվականները: Խաչատուր Ջուղայեցին իր պատմությունը բաժանում է երկու մասի: Առաջինում տալիս է պարսից արքաների ժամանակագրությունը, Նոր Ջուղայի թեմական առաջնորդների և նրանց կյանքի պատմությունը, հանգամանալից ներկայացնում է Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցու և պարսից շահ Սուլեյմանի որդի Հուսեյնի միջև կրոնական բանավեճը, իսկ երկրորդ մասն ամբողջովին նվիրված է Քերիմ խանի գահակալության շրջանին:

Խաչատուր Ջուղայեցու աշխատությունը որոշ կրճատումներով և մաս-մաս հրատարակվել է Մադրասում տպագրվող «Ազդարար» թերթի 1795թ. 5-16-րդ համարներում, իսկ ամբողջական բնագիրը հրատարակվել է Վաղարշապատում 1905թ. Բաբգեն վարդապետ Աղավելյանցի աշխատասիրությամբ:

**Ստեփաննոս Երեց Տերտերյան Հազարջրիբեցի**

XVIII դարի իրանահայ հոգևոր և մշակութային ականավոր գործիչներից է Ստեփաննոս Երեց Հազարջրիբեցին (Տերտերյան), որի հեղինակած «Պատմագիրք» կամ «Հանգիտագիրք» մատյանը անգնահատելի սկզբնաղբյուր է Իրանի հայկական գաղթօջախների (հատկապես Փերիայի և Բուրվարի) և իրանահայ հոգևոր թեմերի XVII-XVIII դդ. պատմության ուսումնասիրության համար: Ստեփաննոս Երեցի ստեղծագործությունները հավաքված են 488 էջանոց մի կաշեպատ մատյանում, որը պահվում է Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանում: Ստեփաննոսի ժառանգությունը մոռացության է մատնված եղել և միայն XIX դարի 70-80-ական թվականներին, երբ Նոր Ջուղայի պատմության քաջագիտակ ուսումնասիրող Հ. Հավհանյանցը ձեռնամուխ է լինում իր երկհատոր աշխատության գրությանը, պատահմամբ հայտնաբերում է «Պատմագիրքը», որից հատվածաբար և առատորեն օգտվում է հատկապես XVIII դարին վերաբերվող եղելությունները շարադրելիս: Հետագա տարիներին մի քանի ուսումնասիրողներ անդրադարձել են Ստեփաննոս Երեցի անձին և ժառանգությանը, որոնց շարքում հարկ է հիշատակել իրանահայ

ճանաչված բանասեր Լևոն Մուրադյանին: Միայն վերջերս Թեհրանի Փերիո Կրթասիրաց միության ջանքերով և Մաշտոց անվան Մատենադարանի աշխատակիցների աշխատասիրությամբ, վաստակաշատ պատմաբան-արևելագետ Վ. Բայբուրդյանի առաջաբանով և ծանոթագրություններով Թեհրանում լույս տեսավ Ստեփաննոս Երեցի մատյանի քննական բնագիրը և դրա աշխարհաբար թարգմանությունը (6):

Ստեփաննոս Երեցի թողած ծավալուն գրավոր ժառանգության ժանրերն ու ընդգրկումը բավական մեծ են: Նրանից մեզ են հասել նրա հեղինակած ոտանավորներ, ժողովրդական բանահյուսության նմուշներ «Երգարան»-ի տեսքով, խրախճանքի երգեր, հանելուկներ, խրատներ, «Տաղարան», ուր հավաքված են պատառիկներ հայ և օտար սրբերին նվիրված ներբողական տաղերից, ապաշխարության երգ-եղանակներ, ինչպես նաև իր հեղինակած «առ Աստված», «առ հոգևորաց», «առ ծնողաց» ներբողները (7):

Բնավ չնսեմացնելով Ստեփաննոս Երեցի թողած գրական, կրոնախրատական և բանահյուսական ժառանգության արժեքը՝ նրա ստեղծագործություններն ուսումնասիրող գիտնականները միաբերան հաստատում են, որ «Պատմագիրք-Հանգիտագիրքը»՝ որպես պատմական երկ և առավել ևս պատմական սկզբնաղբյուր, գերազանցում է վերը թվարկածներին: Ստեփաննոս Երեցի «Պատմագիրքը» հայ ավանդական պատմողական բնույթի պատմագրության վերջին մատյաններից է և ժամանակագրական առումով, փաստորեն, շարունակությունն է Առաքել Դավրիժեցու «Պատմության» և Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն պարսից» երկերի: «…Ստեփաննոսը,- գրում է Վ. Բայբուրդյանը,- հայ վերջին պատմիչն է կամ «պատմիչների կնիքը», որից հետո սկիզբ է առնում գիտական պատմագիտությունը» (8):

«Պատմագիրքը» ժամանակագրական առումով ներառում է շուրջ 120 տարվա պատմություն՝ սկսած Շահ Աբբաս Բ Փոքրի գահակալության վեջին տարիներից մինչև 1789թ.՝ Մուհամմադ խան Ղաջարի ժամանակները: Չնայած որոշ անճշտությունների՝ Ստեփաննոսի «Պատմագիրքը» ականատես-վկայի մի պատում է, որն առավել արժանահավատ է դարձնում նկարագրվող դեպքերի մասին տեղեկությունները:

**Իրանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները**

Հայտնի է, որ դեռևս XIVդ. սկզբից տարբեր միաբանությունների պատկանող կաթոլիկ միսիոներները ակտիվ հոգեորսությամբ էին զբաղվում Պարսկահայքի պատմագավառներում և քարոզչություն էին իրականացնում հատկապես Ուրմիա լճի ավազանի հայաշատ բնակավայրերում: Արտազում և Նախիջևանում կաթոլիկ միսոներների

քարոզչության հետևանքով առաջացած հոգևոր-ազգային աղետների մասին խոսել ենք ատենախոսության առաջին գլխում: Ֆրանցիսկյան, դոմինիկյան, ավգուստինյան, հիսուսական (Ճիզվիթական) և հատկապես կարմելյանների միաբանության անդամները XVII դարից սկսած ակտիվ քարոզչություն սկսեցին Նոր Ջուղայում հաստատված հայության շրջանում (9): Ժամանակին Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերը ներկայացնող բազմաթիվ երևելի դեմքեր հզոր պայքար էին սկսել կաթոլիկ հոգեորսների դեմ և շատ դեպքերում կարողացել էին հասնել որոշակի հաջողությունների. օրինակ բերենք Շահ Աբբաս II-ի 1654թ. հրովարտակը, որով կաթոլիկներին արգելվում է Նոր Ջուղայում եկեղեցիներ հիմնել. «Սույն հրամանով ցանկանում ենք տեղեկացնել հայերի և մյուս կրոնական փոքրամասնությունների հարցերով *վեզիր* Մուհամեդին, որ նախկինում մենք մեծ պատրաստակամությամբ ենք ընդունել Նորին Մեծություն, Ֆրանսիայի Արքայի ներկայացուցչի խնդրանքը՝ թույլատրելու մայրաքաղաք Իսֆահանի մոտ գտնվող Նոր Ջուղա քաղաքում իրենց նախատեսած եկեղեցու կառուցումը: Սակայն այժմ մայրաքաղաքում բնակվող ռայաթները[3] խնդրագիր են ստորագրել՝ պնդելով, որ նմանօրինակ եկեղեցու կառուցումը կարող է ռայաթների մեջ գժտություն մտցնել և հանգեցնել նրան, որ նրանց մի մասը միավորվի ֆրանսիացի աշխարհականների հետ: Այդ պատճառով էլ հրամայում ենք, որ վերոնշյալ եկեղեցու շինարարությունն իսկույն դադարեցվի: Սույն հրամանն ուժի մեջ է նույնիսկ աշխարհականների երկրից ֆրանսիացի պատվիրակի վերադառնալուց հետո» (10):

Հետագա դարերում ևս կաթոլիկ քարոզիչները իրանահայ թեմերի հոգևոր իշխանության տակ գտնվող վայրերում հաստատվելու անհաջող փորձեր կատարեցին, սակայն նրանց հոգևոր հոտը այդպես էլ չստվարացավ և սահմանափակվեց մի քանի հազար հայ կաթոլիկներով: Ընդհուպ մինչև 1954 թվականը Իրանի հայ կաթողիկե համայնքի առաջնորդանիստը գտնվում էր Սպահանում, որի հոգևոր հովվության սահմաններում էին Թեհրան, Սպահան և Թավրիզ քաղաքները: Հռոմի Պիոս XII պապի կողմից Իրանի կաթողիկե թեմի առաջնորդ է նշանակվում դեռևս 1934թ. այստեղ հովվություն իրականացրած Մկրտիչ Աբգարյանը, որի ջանքերով կառուցվում և ձեռամբ Գրիգոր-Պետրոս XV կաթողիկոս-պատրիարք Աղաջանյանի օծվում է Հայ կաթողիկե Սբ. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին: 1962թ. կաթողիկե համայնքի ջանքերով հիմնվում է «Ալիշան» դպրոցը, որը 1981թ. կաթողիկե հովվապետ Էմմանուել

[3] Ենթակաները կամ հպատակները

Փոլադյանի կողմից հանձնվել է Հայ Առաքելական եկեղեցու Թեհրանի թեմական խորհրդին (10): Հայ կաթողիկե եկեղեցիներ կան նաև Սպահանում՝ Սբ. Վարդարանը և Մազանդարան նահանգի «Հայկաշեն» ճամբարի տարածքում՝ Սբ. Անտոնը: Ժամանակակից Իրանում հայ կաթողիկե ոչ ստվար համայնքներ կան Թեհրանում, Շիրազում և Սպահանում, որոնց թիվը չի գերազանցում 2200-ը (10):

Իրանում Հայ ավետարանական եկեղեցու առաջին համայնքները հաստատվել են Թավրիզում դեռևս XIX դարի կեսերից և վայելում էին ամերիկյան բողոքական միսիոներների հովանավորությունը: Իրանահայության շրջանում բողոքական քարոզիչների մեծ մասը ներկայացնում էին Սբ. Գրոց ընկերության անդամները, որոնք հիմնականում գալիս էին Արևմտյան Հայաստանից: Արդեն հաջորդ դարում բողոքական բոլոր համայնքների կենտրոնը դառնում է Թեհրանը, որտեղ էլ Ֆիշերաբադի և Ղավամ-էս-Սալթանե փողոցներում գործող անջատ Հայ ավետարանական եկեղեցիները միավորվելով 1970թ. կազմեցին Ս.Հովհաննես եկեղեցին (10):

Ավետարանական եկեղեցու հոտը կազմող հավատացյալ հայերի թիվը միշտ նվազ է եղել. 1990-ականներին՝ 1900, իսկ ներկա ժամանակներում նրանց կենտրոն համարվող Թեհրանում, ըստ Վ.Բայբուրդյանի տվյալների, չի գերազանցում 200-ը:

Իրանում չնչին թիվ են կազմում հայ ուղղափառները և ունիթորականները: Ուղղափառների մի փոքր համայնք ապրում է Ատրպատականում: Ոչ մեծ թվով հոգեգալստականներ ապրում են Թեհրանում և Թավրիզում: Այս համայնքները Իրանի իսլամական հեղափոխությունից հետո զրկվեցին ամերիկյան դավանակիցների ֆինանսավորումից, և նրանց մի մասը արտագաղթեց Իրանից:

Ամփոփելով նշենք, որ իրանահայ հոգևոր թեմերի դերը համայնքի ազգային-կրոնական նկարագրի պահպանման խնդրում դարերի ընթացքում չի փոխվել: Նրանք իրենց կրթամշակութային առաքելությունն ի սպաս են դրել գաղթավայրի հայապահպանման գործին:

## Եզրակացություններ

Այսպիսով, նշենք, որ

- սույն հոդվածում հատուկ մոտեցում է ցուցաբերվել Իրանահայ հոգևոր-մշակութային ականավոր գործիչներին ներկայացնելու պարագայում: Այն գործիչները, որոնց անձը, գործը և վաստակը բազմաթիվ անգամներ ուսումնասիրված են, կարիքը չունեին մեկ անգամ ևս ներկայացվելու:
- Փորձ է արվել ներկայացնել նրանց, ովքեր, հսկայական ավանդ ունենալով հանդերձ, իրանահայության հոգևոր-մշակութային կյանքում համեմատաբար քիչ են ներկայացված:
- Համառոտ անդրադարձ է կատարվել Իրանում ապրող հայ կաթողիկե և բողոքական համայնքներին, որոնք հստակ արտահայտված հայկական ինքնագիտակցություն ունեն և բավականին համերաշխ են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների հետ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Մինասյան Լ. (2004), Ազգային և մշակութային գործիչներ, Նոր Ջուղա, էջ 172-173:
2. Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից (ԺԸ դար) (1905), Աշխատութեամբ Բաբգեն վարդապետ Աղաւելեանց, Վաղարշապատ, էջ 167-169:
3. Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից (1905), Թեհրան, էջ 62-63:
4. Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից (1905), Բաբգեն վարդապետի Յառաջաբանը, Նոր Ջուղա, էջ 80-85:
5. Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ.Յարութիւն Տեր-Յովհանեանց (1880), հ. առաջին, Նոր Ջուղա, էջ 90-94:
6. Ստեփաննոս Երեց (2017), Պատմագիրք (Հանգիտագիրք), Թեհրան, էջ 11-13:
7. Ստեփաննոս Երեց (2020), Պատմագիրք (Հանգիտագիրք), Վ. Բայբուրդյանի առաջաբանը, էջ XIX-XX; տե՛ս նաև, Վ. Բայբուրդյան, Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարջրիբեցու) «Պատմագիրք» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության, Երևան, էջ 87- 89
8. Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարջրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVIIXVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության /Վ. Բայբուրդյան (2020), Երևան, էջ 50-52:

9. Բայբուրդյան Վ. (1988), Կարմելյանների միաբանության միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում (XVIIդ.,) «Լրաբեր» հասարակական գիտությունների, № 11 (551), Երևան, էջ 84-85:
10. Բայբուրդյան Վ. (2013), Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, էջ 63-65:

## REFERENCES

1. Minasyan L. (2004), Azgayin & mshakowt'ayin gorc'ichner / National and cultural figures/, Nor Jugha, pp.172-173.
2. Xachatowr abeghayi Jowghayecwoy Patmowt'iwn parsic (JhY' dar) /Khachatur Abegha's History of Jugayetsvoi from Persia (19th century)/, edited by Reverend Babgen Aghaveliants (1905), Vagharshapat, pp. 167-169.
3. Xachatowr abeghayi Jowghayecwoy Patmowt'iwn parsic /History of Persia by Khachatur Abegha Jughaetsvoi/ (1905), Tehran, pp. 62-63.
4. Khachatur Abegha's History of Jugayets from Persia (1905), Reverend Babgen's Preface, pp. 80-85.
5. Patmowt'iwn Nor Jowghayow or yAspahan, ashxatasireal i p.Yarowt'iwn Ter-Yovhaneanc /The story of Nor Jughayu, who was a policeman, a hard worker in p. Haroutioun Ter-Yovhanians/ (1880), no. first, Nor Jugha, pp. 90-94.
6. Stepannos Yerets (2017), Patmagirq (Hangitagirq) / History book/, Tehran, pp. 11-13.
7. Stepannos Yerets (2020), Patmagirq (Hangitagirq), V. Baybowrdyani ar'ajabany', e'j XIX-XX /History book (Hangitagirk), foreword by V. Baiburdyan, pp. XIX-XX/; see also, V. Baiburdyan, Step'annos Erec Terteryani (Hazarjribecow) «Patmagirq» («Hangita¬girqy'»)` orpes skzbnaghbyowr XVII-XVIII dareri Irani & iranahayowt'yan patmowt'yan /Stepannos Yerets Terteryan's (Hazarjribetsu) "History book" ("Hangita-girk") as a source of the history of Iran and Iranian Armenians of the XVII-XVIII centuries/, YSU ed., Yerevan, pp. 87- 89.
8. Step'annos Erec Terteryani (Hazarjribecow) «Patmagirqy'» («Hangitagirqy'»)` orpes skzbnaghbyowr XVIIXVIII dareri Irani & iranahayowt'yan patmowt'yan /Stepannos Yerets Terteryan's (Hazarjribetsu) "History Book" ("Hangita Book") as a source for the history of Iran and Iranian Armenians of XVIIIXVIII centuries/V. Baiburdyan (2020) , Yerevan , YSU ed., , pp. 50-52.
9. Baiburdyan V. (1988), Karmelyanneri miabanowt'yan misionerneri

gorc'owneowt'yownn iranahayowt'yan shrjanowm (XVIId.,) /The activities of the missionaries of the Carmelite Order among the Iranian Armenians (XVII century)/, "Laber" of social sciences, № 11 (551), Yerevan, pp. 84-85.

**10.** Baiburdyan V. (2013), Irani hay hamaynqy'. ardi himnaxndirner /The Armenian community of Iran. current issues/, Lusakn ed., Yerevan, pp. 63-65.

**Арман Андрикян**

## ВЫДАЮЩИЕСЯ ИРАНСКИЕ ДУХОВНЫЕ И КУЛЬТУРНЫЕ ДЕЯТЕЛИ И ДУХОВНАЯ ЖИЗНЬ АРМЯНСКИХ КАТОЛИЧЕСКИХ И ЕВАНГЕЛИЧЕСКИХ ОБЩИН

### Заключение

**Ключевые слова и выражения:** пастырские, монашеские, иллюстрированные и процветающие сочинения, прозелиты, охотящиеся за душами, визири, райяты, пастырские, паломники, миссионеры.

Армянская Апостольская Церковь на протяжении всего своего существования играла решающую роль для армян во всех сферах жизни. Все основатели армян волею судьбы разошлись по миру.

В колониях Армянская церковь взяла на себя защиту своей духовной паствы, защиту армян, регулирование отношений зарубежного государства с армянской общественностью, образования и просвещения распространение и многие другие заботы, благодаря которым удалось сохранить армянский язык на протяжении веков личность. Исследование армянских поселений арменоведов Армении и диаспоры достигла довольно высокого уровня за последние пятьдесят лет, и на площади их много.

Ирано-армянские колонии сыграли огромную роль в духовной и культурной жизни Армении. XVII-XVIII вв. Нор-Джуга стала уникальной духовной и культурной столицей армянства, где были сосредоточены основные силы просвещенной армянской интеллигенции, представлявшей духовный класс. В этой статье мы попытаемся представить краткую характеристику некоторых из вышеупомянутых известных и малоизвестных деятелей, принимая во внимание, прежде всего, тот факт, что они были священнослужителями и работали в конкретных ирано-армянских епархиях.

Изучение духовной епархии, охватывающей территорию любого армянского населенного пункта, дает возможность понять и изучить многие актуальные проблемы, возникающие в армянской диаспоре. Как бы мы ни называли армянские общины, живущие за пределами Родины, поселка или диаспоры, проблемы, волнующие их, одни и те же, и в прошлом, и в

настоящем, а проблема сохранения армянства была и остается главным вопросом выживания эти сообщества.

Данная статья является одной из первых попыток представить исследование духовных епархий одного отдельного населенного пункта, где объектом являются представители ирано-армянских духовных епархий, а предметом - духовно-религиозная жизнь иранских армян.

**Arman Andrikian**

## PROMINENT IRANIAN SPIRITUAL AND CULTURAL FIGURES AND THE SPIRITUAL LIFE OF THE ARMENIAN CATHOLIC AND EVANGELICAL COMMUNITIES

### Conclusion

**Key words and expressions:** pastoral, monastic, illustrated and prosperous writings, proselytes, soul hunters, viziers, raiyat, pastoral, pilgrims, missionaries.

The Armenian Apostolic Church has had a decisive role for Armenians throughout its existence in all areas of life. All the founders of Armenians spread all over the world due to fate.

In the colonies, the Armenian church took upon itself the protection of its spiritual flock, the protection of Armenians, regulation of foreign state-Armenian community relations, education and enlightenment distribution and many other concerns, thanks to which it was possible to preserve Armenian over the centuries identity. The Study of Armenian Settlements by Armenian and Diaspora Armenologists has reached a fairly high level in the last fifty years and there are many on the square fundamental works.

Iranian-Armenian colonies have played a huge role in Armenian spiritual and cultural life. XVII-XVIII centuries. Nor Jugha became a unique spiritual and cultural capital of the Armenians, where the main forces of the enlightened Armenian intelligentsia, representing the spiritual class, were concentrated. In this article, we will try to present a brief profile of some of the above-mentioned well-known and little-known figures, taking into account first of all the fact that they were clergy and worked in specific Iranian-Armenian dioceses.

The study of the spiritual diocese, covering the territory of any Armenian settlement, makes it possible to understand and study many pressing problems arising in the Armenian diaspora. Whatever we call the Armenian communities living outside the Motherland, a village or a diaspora, the problems that concern them are the same, both in the past and in the present, and the problem of preserving Armenianness has been and remains the main issue of survival for these communities.

This article is one of the first attempts to present a study of the spiritual dioceses of one separate locality, where the object is representatives of the Iranian-Armenian spiritual dioceses, and the subject is the spiritual and religious life of Iranian Armenians.e clergy and worked in specific Iranian-Armenian dioceses.

**Արման Անդրիկյան** - ՀՀ ԳԱԱ ազգագրության և հնագիտության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ Սփյուռքի հետազոտություններ: Հեղինակ է 11 գիտական հոդվածի: armanandrikian@gmail.com

**Арман Андрикян** - научный сотрудник отдела диаспороведения, Институт этнографии и археологии Национальной академии наук Республики Армения, кандидат исторических наук. Научные интересы: исследования диаспоры. Автор 11 научных статей. armanandrikian@gmail.com

**Arman Andrikian** - Researcher of the Department of Diaspora Studies, Institute of Ethnography and Archeology of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Candidate of historical sciences. Scientific interests: Diaspora Studies. He is an author of Author of 11 scientific articles. armanandrikian@gmail.com

*Խմբագրություն է ուղարկվել 23.10.2023թ.*
*Հանձնարարվել է գրախոսության 02.11.2023թ.*
*Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ*